ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ 36-Ն

« 19 » օգոստոսի 2014 թվական քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 73-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի դրույթներով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 24-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի 2014 թվականի բյուջեի հաստատման մասին>> N 73-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Գործառական դասակարգման բաժին 11, խումբ 1, դաս 2 (պահուստային ֆոնդ) և տնտեսագիտական դասակարգման 4891 (պահուստային միջոցներ) հոդվածի 1359.4 թիվը փոխարինել 459.4 թվով:
2. Գործառական դասակարգման բաժին 03, խումբ 1, դաս 1 (ոստիկանություն) և տնտեսագիտական դասակարգման 4239 (ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) հոդվածի 250.0 թիվը 0 (զրո) թվով:
3. Գործառական դասակարգման բաժին 01, խումբ 06, դաս 1 (ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ) և տնտեսագիտական դասակարգման 4239 (ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) հոդվածի 0 (զրո) թիվը փոխարինել 400.0 թվով, 5122 (վարչական սարքավորումներ) հոդվածի 0 թիվը փոխարինել 150.0 թվով:
4. Գործառական դասակարգման բաժին 04, խումբ 5, դաս 1 (ճանապարհային տրանսպորտ) և տնտեսագիտական դասակարգման 5113 (շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) հոդվածի 11500 թիվը փոխարինել 12100.0 թվով:
5. Գործառական դասակարգման բաժին 01, խումբ 6, դաս 1 (ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ) և տնտեսագիտական դասակարգման 5112 (շենքերի և շինությունների կառուցում) հոդվածից 80000 դրամ հատկացնել շինանյութերի ձեռք բերման համար և որպես աջակցություն տրամադրել Անիի Հրշեջ Փրկարարական ջոկատին՝ ամենագնաց փրկարարական մեքենայի համար ավտոտնակ կառուցելու նպատակով, 5122 (վարչական սարքավորումներ) հոդվածից 150000 դրամ հատկացնել հեռուստացույց ձեռք բերելու և որպես նվիրատվություն հատկացնել ՀՀ Շիրակի մարզի <<Երկրապահ Կամավորական Միություն>> Անիի տարածքային բաժանմունքին:

Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ - ԿՈՂՄ

Վ. ՍԱՀԱԿՅԱՆ – ԿՈՂՄ

Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ – ԿՈՂՄ

Խ. ԲՈՒԼՈՅԱՆ – ԿՈՂՄ

Ա. ՈՒՌՈՒՄՅԱՆ – ԿՈՂՄ

Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ-ԿՈՂՄ

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ * 18 ՕԳՈՍՏՈՍ 2014 * ՄԱՐԱԼԻԿ ՀԱՅԱՍՏԱՆ

ք. Մարալիկ
19 օգոստոսի 2014 թվական